ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1958 Общественные науки

Ա. Հարությունյան

ԲԱՔՎԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԸ

1918 թ. սեպտեմբերի 20-ին Անդրկասպյան երկրի հեռավոր ավազակներում անգլիական իմպերիալիստների և նրանց վարձկան էսեռների, մենշևիկների, մուսավաթականների ու դաշնակների արյունոտ ձեռքով գազանաբար դնդակահարվեցին Բաքվի 26 կոմիսարները։ Բաքվի 26 կոմիսարները՝ Ս. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, Գ. Կորգանովը, Յա. Զեին, Մ. Վեզիրովը, Ի. Մալիգինը, Վ. Պոլուխինը և նրանց մարտական զինակիցները իրենց անունները ընդմիշտ գրեցին սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղած հերոսական պայքարի պատմության մեջ։ Բաքվի 26 խիզախ կոմիսարների անունները դարձան Սովետական հզոր երկրի բազմամիլիոն ժողովուրդների սրբազան բարեկամության խորհրդանիշը։ Բաքվի 26 կոմիսարները հերոսի մահով զոհվեցին լենինիզմի գաղափարների հաղթանակի համար, մեր Սոցիալիստական մեծ հայրենիքի ազատության ու անկախության համար մղած պայքարում։

1918 թ. օգոստոսին Վ. Ի. Լենինը «Նամակ ամերիկյան բանվորներին» հոդվածում նշել է, որ անգլո-ամերիկյան իմպերիալիստները դավաճանաբար վարվեցին բոլոր ժողովուրդների նկատմամբ, նրանք կողոպտեցին միլիոնավոր դոլլարներ։ Ամեն մի դոլլարի վրա արյան հետքեր կան...

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԲԱՔՎՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը, նոր գլուխ բացեց մարդկության պատմության մեջ։ Նա ջախջախեց կապիտալիզմը և բուրժուազիայից խլեց արտադրության բոլոր միջոցները։ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները խանդավառությամբ ընդունեցին Ռուսաստանի պրոլետարիատի պատմական հաղթանակի լուրը։ Բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն իրենց ժողովներում և միտինգներում միահամուռ կերպով ողջունեցին բուրժուական ժամանակավոր կառավարության տապալումը և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ նոր թափով ու եռանդով պայքարի ելան Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի պատմական հաղթանակից հետո Բաքուն Անդրկովկասում առաջին քաղաքն էր, որտեղ հաստատվեց Սովետական իշխանությունը։

Իրականացնելով ժողովրդական լայն մասսաների կամքը և բուռն ցանկությունը, Բաքվի Սովետը 1917 թ. հոկտեմբերի 31-ին որոշում ընդունեց Բաքվի շրջանում իշխանությունը Սովետներին հանձնելու մասին։

Բաքվի Սովետի պատմական այդ նիստում ընտրվեց գործադիր կոմիտեի նոր կազմ, որի մեջ մտան Բաքվի հերոսական պրոլետարիատի պանծալի ղեկավար, մեծ Լենինի զինակից ու հավատարիմ աշակերտ Ս. Շահումյանը և նրա մարտական ընկերներ Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Մ. Բասինը, Մ. Վեզիրո-

վը և ուրիշներ։ Բաքվի Սովետի գործադիր կոմիտեն շուտով եռանդուն գործունեություն ծավալեց։ «Բոլոր նրանք,— ասված է Սովետի գործկոմի աշխատավորներին ուղղված կոչի մեջ,— ովքեր ցանկանում են ժողովրդի բարօրությունը և հոշոտված ու տանջահար երկրում խաղաղության ու կարգի շուտափույտ հաստատում, պետք է անհապաղ և վճռականորեն կանգնեն նոր կառավարության՝ Լենինի կողմից գլխավորվող Ժողովրդական կոմիսարների կառավարության կողմը»[1]։

Բաքվի Սովետը բոլշևիկների ղեկավարությամբ հետևողական պայքար ծավալեց սոցիալիստական ռևոլյուցիայի բոլոր թշնամիների դեմ, ամբողջ Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի համար։ Բաքվի Սովետը խոշոր աշխատանք կատարեց մասնավորապես ֆինանսական և պարենային գործը, ծովային և երկաթուղային տրանսպորտը, փոստը և հեռագրատունն իր ձեռքը վերցնելու ուղղությամբ։

Սովետական կառավարությունը, Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և անձամբ Վ. Ի. Լենինը խոշոր աշխատանք կատարեցին Բաքվի Սովետին օգնելու, նրա հեղինակությունը բարձրացնելու և Անդրկովկասի բոլշևիկների գործունեությունը ղեկավարելու համար։ 1917 թ. դեկտեմբերի 16-ին ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի նիստում քննարկվեց Ի. Վ. Ստալինի զեկուցումը Կովկասի դրության մասին։ Այդ նույն նիստում ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետը Ս. Գ. Շահումյանին նշանակեց Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։ Ժողովրդական Կոմիսարների Սովետի հանձնարարման մեջ ասված էր. «Բոլշևիկների պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անդամ, բանվորների և զինվորների Բաքվի Սովետի նախագահ, Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակված Ստեփան Շահումյանին փոխանցվում է հինգ հարյուր հազար ռուբլի (500.000)՝ Կովկասի Արտակարգ Կոմիսարիատի կարիքների համար»[2]։

Ստ. Շահումյանին տրված այս մանդատը և դրամը Բաքու է բերում պրոլետարական ռևոլյուցիայի լեգենդար հերոս Կամոն՝ Սիմոն Տեր-Պետրոսյանը[3]։

Ստ. Շահումյանի գլխավորությամբ Անդրկովկասի բոլշևիկները լայն գործունեություն են ծավալում, Սովետական Ռուսաստանի կառավարության և Վ. Ի. Լենինի շուրջը համախմբելով երկրամասի բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին։ Վ. Ի. Լենինը մեծ հիացմունքով էր խոսում Կովկասում Ստ. Շահումյանի գլխավորությամբ կատարվող հերոսական աշխատանքի և թշնամու դեմ մղվող անհաշտ պայքարի մասին։ 1918 թվականի փետրվարի 14-ին Վ. Ի. Լենինը Ս. Գ. Շահումյանին հեռագրել է. «Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որն անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ,— և մենք կհաղթենք»[4]։

Իրադարձությունները Բաքվում զարգանում էին արագ թափով։ Հայտնի է որ այդ ժամանակ Ադրբեջանի մեծ մասում, Վրաստանում և Հայաստանում իշխանությունը գավթել էին մուսավաթիստները, դաշնակները և մենշևիկները

[1] Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы. 1917-1918. Баку. 1957. стр. 193.

[2] ЦАОР. СССР. ф. 130. д. 1. л. 40.

[3] Տե՛ս. „Красный Архив". № 4-5. М., 1938. стр. 6.

[4] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 35, էջ 359։

1917 թ. նոյեմբերին ստեղծվել էր, այսպես կոչված, Անդրկովկասյան կոմիսարիատ, որը հանդիսանում էր վրացական մենշևիկների, մուսավաթիստների և դաշնակների կոնտրռևոլյուցիոն ուժերի կոալիցիան։ Այդ կոնտրռևոլյուցիոն ուժերը միավորվել և դաշինք էին կնքել սկզբում գերմանա-թուրքական և ապա անգլիական իմպերիալիստների հետ։ Նրանք մեր երկիրը վաճառել էին իմպերիալիստներին։

Անդրկովկասյան կոմիսարիատը, Անդրկովկասը անջատելով Սովետական Ռուսաստանից և դաշինք կնքելով Հյուսիսային Կովկասի ու Դաղստանի կոնտրռևոլյուցիոն տարրերի հետ, իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր Սովետական Բաքվի դեմ։

Չնայած ստեղծված ծանր դրությանը, օրեցօր աճում էր Բաքվի Սովետի հեղինակությունը և ազդեցությունը աշխատավորական մասսաների վրա։ 1918 թ. մարտին ռևոլյուցիայի և կոնտրռևոլյուցիայի ուժերի միջև տեղի ունեցավ առաջին զինված գոտեմարտը։ 1918 թ. մարտին Բաքվի հերոսական պրոլետարիատը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ջախջախեց հարձակման անցած մուսավաթական բուրժուա-կալվածատիրական բանդաներին։ Ս. Գ. Շահումյանը խոշոր նշանակություն է տվել 1918 թ. Բաքվի մարտյան դեպքերին։ Նա ընդգծել է, որ Բաքվում երեք օր շարունակ կատաղի մարտեր էին տեղի ունենում մի կողմից Կարմիր Գվարդիայի և մյուս կողմից մուսուլմանական վայրենի դիվիզիայի միջև։ «Մարտերի արդյունքները մեզ համար փայլուն են։ Թշնամու ջախջախումը լիակատար էր։ Մենք նրանց թելադրեցինք պայմանագիր, որը նրանք ստորագրեցին առանց առարկության»[1]։

Բաքվի պրոլետարիատն այդ փայլուն հաղթանակին հասավ կոմունիստական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ։ 1918 թ. մարտի 30-ին ստեղծվեց Բաքվի և նրա շրջանների Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտե, որի կազմի մեջ մտան Ս. Շահումյանը, Ն. Նարիմանովը, Ա. Ջափարիձեն, Գ. Կորգանովը և Ի. Սուխարցևը։ Մարտյան կռիվներում տարած փայլուն հաղթանակի շնորհիվ Բաքվում ամրապնդվեց Սովետական իշխանությունը։ 1918 թ. ապրիլի 25-ին Բանվորների, Զինվորների և Նավաստիների Դեպուտատների Բաքվի Սովետը Ս. Գ. Շահումյանի գլխավորությամբ կազմեց Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետ։

Բաքվի Ժողկոմսովետի նախագահ և արտաքին գործերի կոմիսար հաստատվեց Ս. Գ. Շահումյանը, ներքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Պ. Ա Ջափարիձեն, բաղաքային տնտեսության ժողովրդական կոմիսար՝ Ն. Ն. Նարիմանովը, Ժողովրդական Տնտեսության Խորհրդի նախագահ՝ Ի. Տ. Ֆիոլետովը ռազմա-ծովային գործերի ժողովրդական կոմիսար՝ Գ. Ն. Կորգանովը, նահանգային կոմիսար՝ Մ. Ա. Ազիզբեկովը, արդարադատության ժողովրդական կոմիսար՝ Ա. Բ. Կարինյանը, լուսավորության ժողովրդական կոմիսար՝ Ն. Ն Կոլեսնիկովան։ Որոշ ժամանակից հետո հողագործության ժողովրդական կոմիսար նշանակվեց Մ. Հ. Վեղիրովը, աշխատանքի ժողովրդական կոմիսար Յու. Դ Զևինը, ջրային տրանսպորտի ժողովրդական կոմիսար՝ Ս. Ա. Մարգարյանը

Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը, իր գործունեության հիմքում դնելով Վ. Ի. Լենինի ցուցումները, ծավալեց բեղմնավոր աշխատանք, որն արժանացավ աշխատավորական մասսաների բարձր գնահատականին։

[1] Ս. Գ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 566։

2. ԲԱՔՎԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բաքվում Սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո Ժողովրդական Կոմիսարների Սովետը ձեռնարկեց սոցիալիստական մի շարք միջոցառումներ, որոնք հսկայական պատմական նշանակություն ունեցան։ Բաքվի Ժողկոմսովետի սոցիալիստական միջոցառումները նպատակ ունեին բայրայելու բուրժուազիայի տնտեսական հիմքերը և ստեղծելու նոր, սոցիալիստական տնտեսություն, բարելավելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիների դրությունը։ Այդ նպատակին հասնելու համար Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետն իր դեկլարացիայի մեջ նշում էր, որ ինքն ամենասերտ կապերով կապված կլինի Համառուսաստանյան կենտրոնական իշխանության հետ և, ելնելով տեղական պայմաններից, կկենսագործի Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության՝ Ժողովրդական Կոմիսարների Գերագույն Սովետի բոլոր դեկրետները և կարգադրությունները[1]։

Բաքվի Ժողկոմսովետը իր գոյության ընթացքում դեկավարվում էր ՌԿ(բ)Պ Վենտկոմի և Վ. Ի. Լենինի ցուցումներով, օգտագործում էր Սովետական Ռուսաստանի փորձը և այդ պատճառով ստանում աշխատավորական լայն մասսաների ջերմ պաշտպանությունն ու ակտիվ աջակցությունը։ Ահա ինչու նա չափազանց դժվարին պայմաններում կարողացավ իրականացնել սոցիալիստական միջոցառումներ, որոնք պաշտպանություն գտան ժողովրդական մասսաների կողմից։ Առաջին կարևոր միջոցառումը եղավ բանկերի ազգայնացումը, որի շնորհիվ հսկայական քանակությամբ ֆինանսական միջոցներ կուտակվեցին և ի սպաս դրվեցին ժողովրդական տնտեսության վերականգնման ու ռազմական ուժեր ստեղծելու գործին։ Հակասովետական ագիտացիային ու պրոպագանդային վերջ տալու նպատակով Բաքվի Ժողկոմսովետը 1918 թ. մայիսի 1-ին հատուկ որոշում[2] ընդունեց, որով արգելվում էր Բաքվի տպարաններում կոնտրռևոլյուցիոն գրականության տպագրությունը։

1918 թ. մայիսի 28-ին Բաքվի Ժողկոմսովետը դեկրետ ընդունեց ձկնորսարանների ազգայնացման մասին[3]։ Այդ որոշման մեջ միաժամանակ ասված էր. «...ձկնորսարանները... իր ապրանքով, շարժական ու անշարժ գույքով հայտարարել պետական սեփականություն՝ ազգայնացնել։ Նշանակել կոմիսար՝ նրան հանձնելով ձկնորսարանների դերադույն կառավարումը»[4]։

ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի 1918 թ. մայիսի 28-ի որոշման հիման վրա Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը 1918 թվականի հունիսի 2-ին որոշում ընդունեց Ադրբեջանի նավթարդյունաբերության ազգայնացման մասին, որը խոշոր նշանակություն ունեցավ Սովետական պետության համար։ Բաքվի Ժողկոմսովետը իր կարևորագույն խնդիրներից մեկը համարեց Սովետական Ռուսաստանին նավթով ապահովելը։ Այդ կապակցությամբ Բաքվի Ժողկոմսովետի

---

[1] Տե՛ս Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы 1917—1918, стр. 383.

[2] Տե՛ս. газ. „Бакинский Рабочий", № 79, 1 мая 1918.

[3] Там же, № 99, 28 мая 1918.

[4] Տե՛ս Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане, Документы и материалы 1917—1918, стр. 442.

որոշման մեջ ասված է. «Բաքվից ուղարկվող նավթի քանակից է կախված Ռուսաստանի բախտը... Առանց վառելիքի, առանց մազութի, առանց մեր քսայուղերի չի կարելի գործի դնել Մոսկվայի և Իվանովո-Վոզնեսենսկի ֆաբրիկանները, Պետերի և Պովոլժիեի գործարանները... Չի կարելի ստիպել երկաթուղայիններին հիշտ աշխատել, չի կարելի ժամանակին և պատշաճ արագությամբ փոխադրել մեր ռևոլյուցիոն Կարմիր Բանակը՝ ռեսպուբլիկան պաշտպանելու համար»[1]։ Նավթի արտահանությունը կազմակերպելու գործով Մոսկվայից Բաքու ուղարկվեց հատուկ հանձնաժողով, որի կազմում էր նաև Ս. Մ. Տեր-Գաբրիելյանը։ Վ. Ի. Լենինի ստորագրությամբ ընկ. Ս. Մ. Տեր-Գաբրիելյանին տրված վկայականի մեջ ասված է. «Սովետական բոլոր կազմակերպությունները պարտավոր են նրան ցույց տալ լիակատար աջակցություն և նրա տրամադրության տակ դնել իրենց տրամադրության տակ եղած ուժերն ու միջոցները այս առաջադրանքը կատարելու համար»[2]։

Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշման հիման վրա նավթարդյունաբերության բոլոր ձեռնարկությունները ազգայնացվեցին և անցան Ժողովրդական Տնտեսության Խորհրդի տնօրինության տակ։ Նավթարդյունաբերության ազգայնացումը տեղի ունեցավ դասակարգային սուր պայքարի պայմաններում։

Բաքվի կոմունիստական կազմակերպությունները Սա. Շահումյանի գլխավորությամբ անհաշտ պայքար մղեցին կապիտալիստական տարրերի, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների դեմ։

Նավթարդյունաբերության ազգայնացման վերաբերյալ դեկրետը Բաքվի պրոլետարիատը դիմավորեց մեծ ոգևորությամբ, քանի որ այդ դեկրետը բավարարում էր բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պահանջները և ապահովում նրա արմատական շահերը։ Նավթահանքերում, գործարաններում, ֆաբրիկաներում տեղի ունեցան բազմամարդ ժողովներ, որտեղ միահամուռ կերպով ընդունվեցին բանաձևեր, որոնք հավանություն էին տալիս Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետին և պատրաստականություն էին հայտնում մինչև վերջը պաշտպանել այն։

Ադրբեջանի նավթարդյունաբերության կարիքների համար Սովետական կառավարությունը հատկացրեց խոշոր միջոցներ և հանձնարարեց Բաքվի Ժողկոմսովետին ձեռնամուխ լինել նավթահանքերի, գործարանների ու ֆաբրիկաների վերակառուցման գործին։

Ի. Ֆիոլետովի ղեկավարությամբ մշակվեցին մի շարք միջոցառումներ նավթի հանույթն ու արտահանությունն ավելացնելու և նավթարդյունաբերական բանվորների դրությունը բարելավելու համար։ Կարճ ժամանակամիջոցում Բաքվի նավթագործները լուրջ հաջողություններ ձեռք բերեցին նավթի հանույթն ավելացնելու բնագավառում։ Այսպես, եթե մինչ ազգայնացումը, մայիսին, արդյունահանվել էր 11,4 միլիոն փութ նավթ, ապա ազգայնացումից հետո, հունիսին, արդյունահանվել էր 17,8 միլիոն փութ նավթ։ 1918 թ. գարնանը և ամռանը Բաքվից Կասպից ծովով և Վոլգայով Ռուսաստան փոխադրվեց 4,3 մի-

[1] Տե՛ս Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы 1917—1918, стр. 442.

[2] Там же.

լիոն տոննա նավթամթերք։ 1918 թ. հունիսի 5-ին Բաքվի ժողկոմսովետը դեկրետ հրատարակեց կասպիական առևտրական նավատորմի ազգայնացման մասին։

ՌՍՖՍՌ կառավարությունը և ՌԿ(բ)Պ Կենտկոմը հավանություն տվին ու ջերմորեն պաշտպանեցին Բաքվի ժողկոմսովետի սոցիալիստական միջոցառումները։ 1918 թ. հունիսի 8-ին Ի. Վ. Ստալինը Բաքվի ժողկոմսովետին գրել է. «Կասպիական նավատորմի ազգայնացման հարցում կարող եք գործել վճռականորեն։ Կարող եք վստահ լինել, որ ժողկոմսովետը Ձեզ հետ կլինի։ Ամբողջ ասվածը ընդունեցեք ոչ թե որպես իմ անձնական կարծիք, այլ որպես Վ. Ի. Լենինի առաջարկությունը, որի հետ ես խոսել եմ շոշափված բոլոր հարցերի շուրջը»[2]։

Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետն իր գոյության ընթացքում զգալի չափով բարելավեց բանվորների և գյուղացիների նյութական դրությունը։ Բարձրացրեց բանվորների աշխատավարձը, սահմանեց 8-ժամյա աշխատանքային օր։ 1918 թ. մայիսի 22-ին ՌՍՖՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետը ընդունեց մի որոշում, որը վկայում է Բաքվի պրոլետարիատի նկատմամբ Սովետական կառավարության և Վ. Ի. Լենինի մեծագույն հոգատարության մասին։ Պատմական այդ որոշման մեջ ասված է. «Պետական գանձարանի միջոցներից ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի վառելանյութի բաժնի տրամադրության տակ դնել հարյուր միլիոն ռուբլի (100.000.000 ռ.) Բաքվից նավթ արտահանելու և նավթահանքերի բանվորների աշխատավարձը վճարելու համար»[3]։

Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետը Ստ. Շահումյանի գլխավորությամբ մեծ աշխատանք կատարեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիների ռևոլյուցիոն դաշինքի ամրապնդման համար։ Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ հրավիրվեց Գյուղացիական Դեպուտատների Սովետների առաջին համագումարը, որը բացառիկ նշանակություն ունեցավ աշխատավոր գյուղացիությանը Սովետական իշխանության շուրջը համախմբելու գործում։ Գյուղացիական Դեպուտատների Սովետների առաջին համագումարը, որ տեղի ունեցավ 1918 թ. մայիսի 26—29-ը, չափազանց կարևոր քայլ էր բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման ուղղությամբ։ Այդ համագումարը անցավ աշխատավորների բարձր ոգևորության պայմաններում։ Համագումարի պատգամավորները ամբողջ աշխատավոր գյուղացիության անունից ողջունում և հավանություն էին տալիս Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետի սոցիալիստական միջոցառումներին, մասնավորապես հողի ազգայնացմանը, որի շնորհիվ հողը մեկընդմիշտ դադարում էր մասնավոր սեփականություն լինելուց և հանձնվում աշխատավոր գյուղացիներին։ Բաքվի ժողկոմսովետի՝ հողի ազգայնացման վերաբերյալ դեկրետը աշխատավոր գյուղացիների մեջ առաջ բերեց աշխատանքային նոր խանդավառություն։

Այդ բոլոր միջոցառումների հետ մեկտեղ, Բաքվի ժողկոմսովետն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց բուրժուա-կալվածատիրական պետական

---

[1] ՀԱՄ. Труды Азербайджанского филиала ИМЭЛ при ЦК КПСС, т. XII, 1948, стр. 121.

[2] Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы 1917-1918, стр. 547.

[3] ЦАОР, СССР, ф. 130, оп. 7, д. 23, л. 129.

հին ապարատը ոչնչացնելու և Սովետական իշխանության օրգաններ ստեղծելու գործին։ Ստեղծվեց բանվորա-գյուղացիական միլիցիա, որը մեծ աշխատանք կատարեց Բաքվում ռևոլյուցիոն կարգ ու կանոն հաստատելու համար։ 1918 թ. մայիսի 26-ի դեկրետով վերացվեցին արդարադատության հին օրգանները և ստեղծվեցին ժողովրդական դատարաններ։

Կոնտրռևոլյուցիայի դեմ պայքարելու համար ստեղծվեց արտակարգ հանձնաժողով, որը գլխավորեց պետական տաղանդավոր գործիչ Ս. Մ. Տեր-Գաբրիելյանը։

Բաքվի ժողկոմսովետը գործնական միջոցներ ձեռնարկեց նաև ժողովրդական կրթության, առողջապահության և արդարադատության ասպարեզում։

Բաքվի ժողկոմսովետը 1918 թ. մայիսի 12-ի դեկրետով գպրոցը անջատեր մզկիթից ու եկեղեցուց և սահմանեց ընդհանուր պարտադիր ու անվճար ուսուցում աշխատավորների երեխաների համար։ 1918 թ. մայիս-հունիս ամիսներին բանվորական և գյուղական շրջաններում բացվեցին նոր դպրոցներ և երեկոյան համալսարաններ։ Այսպիսով, Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետն իր գոյության չափազանց կարճ ժամանակամիջոցում իրականացրեց սոցիալիստական այնպիսի միջոցառումներ, որոնք ամրապնդեցին Սովետական իշխանությունը և զգալի չափով բարելավեցին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության տնտեսական ու կուլտուրական վիճակը։

* * *

Իրադարձությունները Բաքվում զարգանում էին չտեսնված արագությամբ։ Դասակարգային պայքարը գնալով սրվում էր։ Ոտարերկրյա ինտերվենտները և ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերը միացյալ ճակատով ամեն կերպ ձգտում էին Բաքվում խեղդել Սովետական իշխանությունը և Սովետական Ռուսաստանը զրկել վառելանյութից։

Սովետական Բաքվի դեմ ոտքի ելան գերմանա-թուրքական և անգլիական բանակները։ Իմպերիալիստական այդ երկու խմբերից ամեն մեկը ձգտում էր զավթել Բաքվի նավթը, բանվորներին և գյուղացիներին դարձնել իրենց ստրուկները։ «...Մեզ հնարավոր էր թվում,—գրում էր Լյուդենդորֆը,—նավթի պակասը ծածկել Անդրկովկասից և հատկապես Բաքվից նավթ փոխադրելով... Թուրքիայի հետ համաձայնության գալով, գնդապետ Ֆոն-Կրիսսը պետք է կազմակերպեր Բաթում—Թիֆլիս—Բաքու երկաթուղու շահագործումը, որտեղ կար վագոն-ցիստերների մեծ պարկ...»[1]։

Անգլիական իմպերիալիստներն էլ իրենց հերթին ոչնչի առաջ կանգ չէին առնում Բաքուն զավթելու համար։ Իրանում բրիտանական էքսպեդիցիոն բանակի հրամանատար գեներալ Դենստերվիլը գրել է. «...մեր կողմից Բաքվի գրավումը կհասցներ հետևյալ հետևանքներին՝ կփակեր թշնամու ճանապարհը դեպի նավթի պաշարները և Կենտրոնական Ասիա տանող դռները։ Մեր կողմից նավթի պաշարների գրավումը անխուսափելիորեն կկանգնեցներ Անդրկովկասյան երկաթուղիներով կատարվող երթևեկությունը, քանի որ այդ երկաթուղիները սովորաբար կախված էին Բաքվի նավթային աղբյուրներից։

---

[1] *Денстерсиль*. Британский империализм в Баку и Персии в 1917—1918 гг., стр. 126.

...Մեր պլանը հանգում էր Կասպից ծովի վրա իշխելուն... Դրան մենք կարող էինք հասնել միայն Բաքուն օկուպացնելով... Բաքվի նշանակությունը վիթխարի էր և նրան տիրելու փորձի ամեն մի բայլ անպայման արդարանում էր»[1]։

Բաքվին տիրելու համար շարժվեցին թշնամական բոլոր ուժերը։

Թուրքական զորքերը հարձակման անցան Բաքվի Սովետական իշխանությունը ճնշելու համար։ 1918 թ. մայիսին գերմանա-թուրքական ինտերվենտներին հաջողվեց ներխուժել Ադրբեջան և օկուպացնել Գյանջան։ Այստեղ նրանց միացան մուսավաթիստների և վրացական մենշևիկների բանդաները։

Այդ նույն ժամանակ հյուսիսից դեպի Բաքու էին շարժվում մուսավաթիստների և Դաղստանի կալվածատեր Գոցինսկու կոնտրռևոլյուցիոն հրոսակախմբերը։

Իրանից շարժվում էր անգլիական բանակը։

Սոցիալիստական ռևոլյուցիայի նվաճումները պաշտպանելու համար Կոմունիստական պարտիայի կոչով Բաքվի հերոսական պրոլետարիատը միահամուռ կերպով ոտքի ելավ և մասսայաբար համալրեց քաջարի Կարմիր Բանակի և կարմիրգվարդիական ջոկատների մարտական շարքերը։ Բաքվի պրոլետարիատի օրինակով, ռևոլյուցիայի թշնամիների դեմ պայքարի ելավ նաև աշխատավոր գյուղացիությունը։

Բաքվի պաշտպանությունը դարձավ համաժողովրդական գործ։

Պանծալի լենինյաններ Ս. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Գ. Կորգանովի, Ֆ. Սոլնցևի և կոմունիզմի անվեհեր մյուս մարտիկների ղեկավարությամբ Սովետական զորքերի նոր զորամասեր ստեղծվեցին, որոնք հերոսաբար պաշտպանում էին Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի որոշակակիր՝ պրոլետարական Բաքուն։ Բաքվի հերոսական Կոմունայի համար այդ չափազանց ծանր օրերին խոշոր օգնություն ցույց տվեցին պարտիայի Կենտկոմը, Սովետական կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը։ Նրանք Բաքու էին ուղարկում զենք, պարենամթերք և զինված ուժերի նորանոր ջոկատներ։

Կոնտրռևոլյուցիոն ուժերը նույնպես միավորում էին իրենց ուժերը Բաքուն գրավելու համար։ Բաքվում աշխուժացան էսեռները, դաշնակները և մենշևիկները։ Վաճառվելով օտարերկրյա ինտերվենտներին, նրանք անում էին ամեն բան, որպեսզի ձախողեին Բաքվի պաշտպանության գործը։

Չնայած այն մեծագույն ջանքերին, որ գործադրվեցին Բաքվի պաշտպանության համար, Սովետական իշխանությունը Բաքվում թշնամիների գերակշռող ուժերի ճնշման տակ 1918 թ. հուլիսին ժամանակավորապես ընկավ։ Ստեղծվեց, այսպես կոչված, «Ցենտրոկասպիայի դիկտատուրա», որը կույր գործիք դարձավ անգլիական իմպերիալիստների ձեռքին։

«Ցենտրոկասպիայի դիկտատուրայի» հրավերով Բաքու մտան անգլիական իմպերիալիստները, որոնք քաղաքում ստեղծեցին ռազմական դրություն և դաժան դատաստան տեսան պրոլետարիատի ռևոլյուցիոն ուժերի հետ։

1918 թ. օգոստոսի 17-ին «Ցենտրոկասպիայի դիկտատուրան» ձերբակալեց մի խումբ սովետական գործիչների, որոնց թվում էին Բաքվի պանծալի Կոմունայի տաղանդավոր ղեկավարներ Ս. Շահումյանը, Մ. Ազիզբեկովը, Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Գ. Կորգանովը, Յա. Ջևինը և ուրիշներ։ Ա. Ի.

[1] *Дикстервиль*. Британский империализм в Баку и Персии в 1917—1918 гг., стр. 120.

Միկոյանը և բոլշևիկյան մի քանի ուրիշ գործիչներ Բաքվի պրոլետարիատի անունից լողոք հայտնեցին Կոմունայի զեկավարների ապօրինի ձերբակալման դեմ և պահանջեցին բանտից անհապաղ ազատել նրանց։ Ա. Ի. Միկոյանի գլխավորությամբ Բաքվի բոլշևիկներին հաջողվեց ձերբակալված կոմիսարներին ազատել բանտից։

3. ԱՆՄԱՀ ՄԱՐԴԻԿ

Բոլշևիկները նախապատրաստել էին «Սևան» շոգենավը, որով կոմիսարները պետք է մեկնեին Աստրախան։ Բայց երբ կոմիսարները եկան նավահանգիստ, շոգենավը արդեն մեկնել էր։ Կոմիսարները ստիպված եղան նստել «Թուրքմեն» շոգենավը՝ Աստրախան մեկնելու նպատակով, բայց նավի հրամանատարությունը հրաժարվեց այդ պահանջը կատարելուց։ «Թուրքմեն» շոգենավի անձնակազմը անգլիական սպաների, դաշնակների, էսեռների և մենշևիկների պահանջով ուղղություն վերցրեց դեպի Կրասնովոդսկ։ Անդրկասպյան էսեռական կառավարությունը ձերբակալեց Բաքվի կոմիսարներին։

1918 թ. սեպտեմբերի 19-ին անդրկասպյան էսեռական կառավարությունը դումարեց գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվեց սպանել Բաքվի կոմիսարներին։

Այդ չափազանց ծանր օրերն ու դեպքերը այսպես է վերհիշում Ա. Ի. Միկոյանը։— Երեք օր էր անցել, իսկ մենք ընկել էինք այդ նկուղը։

... սեպտեմբերի 20-ի գիշերը։

Պառկած էինք, ոմանք թախտերին, ոմանք հատակին, մի քանիսը քնած էին, մյուսները նիրհում են...

Լուսամուտից նայում է նենգ լուսինը, պայծառ, լուսավոր։

Ժամը երկուսն է։

Լսվում է աղմուկ, երկաթի ճռինչ։

Բացվում է դուռը, ներս է խուժում սոցիալիստ-դահիճների բանդան։ Սկսում են մեկ առ մեկ կանչել անուններով։

Հասնում է ժամը բաժանվելու լավագույն ընկերներից...

Այն հարցին, թե ուր են տանում, պատասխանում են.

«Այստեղ նեղ է, տեղափոխում են Աշխաբադ՝ մարգային բանտը»։

Բաքվի 26 կոմիսարներին Աշխաբադ տեղափոխելու պատրվակով տեղավորեցին երկաթուղային գնացքի վագոններում։ Կրասնովոդսկից 207 վերստ դեպի արևելք, Ախչա-Կույմա և Պերևալ կայարանների միջև, 118-րդ հեռակրասյան մոտ գնացքը կանգ առավ։ Երկաթգծից 30 սաժեն հեռավորության վրա անգլիական ինտերվենտները ու նրանց էսեռական վարձկանները գազանաբար գնդակահարեցին Բաքվի 26 կոմիսարներին։ Ստոր մարդասպանների արյունոտ ձեռքից ընկան բոցաշունչ ռևոլյուցիոներներ, կոմունիզմի անվեհեր մարտիկներ Ս. Գ. Շահումյանը, Մ. Ա. Ազիզբեկովը, Ա. Ա. Ջափարիձեն, Ի. Տ. Ֆիոլետովը, Մ. Հ. Վեզիրովը, Յա. Դ. Զեինը, Գ. Ն. Կորգանովը, Ի. Վ. Մալիգինը, Գ. Գ. Պետրովը, Վ. Ֆ. Պոլուխինը, Ս. Գ. Հովսեփյանը, Մ. Բ. Բասինը, Ա. Մ. Ամիրյանը, Ի. Յա. Դոբրիշևը, Ֆ. Ֆ. Սոլնցևը, Է. Ա. Բերդը, Ա. Մ. Կոստանդյանը, Մ. Ռ. Կորգանովը, Ա. Ս. Բորյանը, Ս. Ա. Բոգդանովը, Ա. Բ. Ավագյանը, Ի. Մ. Նիկոլաշվիլին, Ի. Պ. Մետաքսան, Ա. Ա. Բոգդանովը, Ի. Ա. Միշնեն, Գ. Ա. Ամիրովը։

Բաքվի 26 հերոս կոմիսարները իրենց վերջին խոսքում ասում էին դահիճներին։— Դուք սպանում եք մեզ, բայց հիշեցեք, որ մենք մենակ չենք, մեծ, հզոր ու անպարտելի է կոմունիզմի բանակը։

Ժողովրդի արժանավոր զավակները ընկան գոչելով՝ «Կեցցե կոմունիզմը»։

Կանցնեն դարեր, բայց սերունդների սրտում միշտ վառ կմնա Բաքվի 26 կոմիսարների պայծառ հիշատակը, որոնք իրենց արյունը կաթիլ առ կաթիլ տվեցին սովետական կարգերի հաղթանակի համար։

Հավերժ փառք Բաքվի 26 հերոս կոմիսարներին։